

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ՄԻԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ. — Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տնս թաղմ. 1922 էջ 286)

ԻԸ.

« Հայք յեղիսարեթուպուրիս Դրանսիոսանիոյ » 'նմտալից հատորին մէջ՝ նամակագրիս գործունէութեան վրայ բաւական բան կը գտնենք: Հեղինակը զանիկայ ասաքիսական ոգով վառաւած, ազգասէր, գործունեայ ու յաւիտեակ կ'անուանէ իրաւամբ, վասն զի « ամենայն զօրութեամբ, ճարտարութեամբն ու ճարտարաբանութեամբը « կը ջանայ որ թէ՛ գլեբրլա ու թէ՛ զՊաշտպալով ազատ քաղաքաց կարգը բարձրաւ » ցընէ: Զինքը — կ'ըսէ — մէյ մը Վիեննա, մէյ մը Հէլմանշդաւտ կը գտնենք, խօսելու, « գործելու, արտօնութիւններ ընդունելու, մէկ խօսքով իւր ազգը բարձրացնելու ու « երջանիկ ընելու համար »:

Այս հակիրճ տեղեկութեանց հետ՝ հետեեալ տողերն ալ անոր արդիւնաշատ կենաց մէկ քանի կենսագրական գիծերը կը ներկայացնեն. « Որչափ յարակցեալ պաւ « բազաններէն կրնանք հետեւցնել, տարիներէ ի վեր կայսերական արտօնութեանց « հրովարտակի մը խնդիրն կար իշխարեթուպուրիսցւոց մէջ: Այս միջոցին է որ « (իբր 1724—ին) Հոռմէն կը խրկուի Դրանսիոսանիա առաքելական քարոզիչ մը: « Այս գիտնական ու գործունեայ անձն Պաշտպալովցւոց ջով միայն « միսօնար » « անունով ծանօթ է. — որ թրեւս Մինաս Թորոսեան վարդապետն ըլլայ. — բայց « Վիեննայի արքունեաց մէջ ճանչցուած ու կայսրէն մեծապէս զովուած անձ մըն է: « Կարուոյս Զ. գինք « եռանդուն ու հաւատարիմ հպատակ, գեղեցիկ արուեստից ու « փիլիսոփայութեան, ինչպէս նաև աստուածաբանութեան վարդապետ կ'անուանէ. « ու քանի մը տարի ետքը հրատարակուած կայսերական արտօնագրին մէջ Պարոն « Ենեան (Baron) անունով նշանակուած է »:

Պերյարգիլի Հայր Իմ Ի տէր

... սկզբանէ Նօնիիոսն ըստ ասացելոյն իմոյ և խնդրուածօք իմովք իմփննիօ էառ բարեխօս լինիլ, և եղև, մինչ է տարի Օգոսէտո եպիսկ. ոչ կարաց կէտն այն տալեց շինել, և հաստատեալ է զօրաթա տան գլոխ տալ տարոց տարի երկրին, որ միայն կամեր գհայս զոլ միաբան ոչ դնելով քանականութիւնն տալեց, այժմ մեծ դժվարութեամբ եղև, այս.

1. Գովրդիկան. ապ. Վիեննա 1893 էջ 60.

ինքն ամառնային ժամանակն. լսելով ես զայս լցեալ մեծաւ ուրախութեամբ պատրաստեցայ ի ճանապարհ, զի այս էր մեծ արգելմունք: Հայք լուեալ զայս զարմացան թէ որպիսի հելտ բան եղեալ է: և այսչափ տարի յամեցեալ է. սկսեցին քարշել զտեղիս և զազարակս Ոլախ եպիսկոպոսի, որ անհամբեր և ի բնութենէ բարկասիրտ չարախօսեաց յայտնի ընդ(դ)էմ Հայոց (և ոչ եղև չարագոյն) ընդդէմ Նայսերական իշխանաց: Հայք շուտով զրեցին ինձ մնալ աստ, զի և զայս հաստատեցեմ, և իշխանք բարկացեալք զրեցին աստ, ուստի վասն բազում հպարտութեան նորա յափշտակեցին զտեալ առիթ զազարակս, և ետին Հայոց: Մինչև զայս յաղթեցին հայք, սկսեցին և զայլս պահանջել, այսինքն ոչ կամին պահել և օգնութիւնն տալ կայսերական զինուորաց, ի ժամանակի նեղութեան և պատերազմոյն, որ է անգէտ և անկարելի խղիթր. քանզի ի նմին ժամանակի ոչ եկեղեցիք և ոչ եկեղեցականք ազատ են: Կարես աստի իմանալ թէ որչափ վիշտ և նեղութիւն քաշեցին. նուաղեցաւ զօրութիւն իմ և մաշեցայ: Ուստի խնդիր զրեցի իշխանի միոյ կայսերականի, որ զհայս խրատիցէ առնուլ զայսմիկ շնորհս և ոչ երբեք յամեցուցանէ զփրկիլիկութիւն, քանզի այսմիկ կերպիւ կորուսանիցէ զնա, մինչ երկիրն լուեալ զպարգևեալ շնորհս Հայոց օր ըստ օրէ ոչ զաղարի զանգատ զրել աստ կայսերի, թէ որպէս կարէ և կամի զբոլոր երկիրն ոտնակոխ առնել և զփոքրիկ ազգն բարձր(ա)ցուցանել. և զայս խրատեալ նոցա հանգան հայք և լոեցին ի խնդրոյ, և թէ սակաւ ինչ ժամանակ թողեալ իցէին՝ ստուգապէս կորուսանէին զշնորհս. այժմիկ զրեցին հայք, զի սուեալ զփրկիլիկին երթիցեմ ի տուն, բայց աստ մնալոց եմ մինչեւ մեծ պաքս...

Պատրաստական ծառայ

ի Վիեննայ 29 տեքտեմպ 1725 Տէր Մինաս Պարոնեան աստուածաբանութեան վրդպտ.

ԻԹ.

Հետագայ նամակը պատմական տեսակէտով կարևոր կը դասենք, նկատի ունենալով նամակագրին անձը՝ որ ոչ միայն կը զբաղեցնէ ցարդ մեր բանասէրները իր շահեկան թղթերով՝ այլ որովհետեւ ինքն իսկ իր բաժինը բերած է մեր ազգային մատենագրութեան մէջ, (տես աւոր հրկերուն ցանկը ԳԱԽՄԲԵԱՐԵԱՆ, «Պատմ. Երկրա Պատրիարքներու...» էջ 289-32): Յիշենք Եպս. ի այս թուղթը իր կենսագրութեան մէկ պակաս կէտը պիտի լրացնէ այնու՝ որ երևան կը բերէ իր մօրը մահուան պարազանները և թէ անոր ուր թաղուած ըլլալը:

Գերարցելոյ և գերիմաստի տեսան անասն

Միհրարայ Արքայի

Յայտ առնեմ բազմաւ սիրով, ի փետրարի 13, մայրն իմ անկաւ ի մահին ծանր ցաւագնութեամբ և տագնապիւն յոյժ՝ ոչ ունելով վնասգիտաւ: Ի չորրորդում առաւօտոյն՝ մինչ հայցէի ներ պատարագին այցելութիւն իմն ի Տեառնէ, իսկոյն եկն ի միտ իմ արազահաս օգնութիւն սրբոյն Փիլիպոսի Ներէի և աւարտեալ զպատարագն՝ դարձայ փութով ի տուն, և պատմեցի համառօտաբար մօր իմոյ գերիս կամ զչորս հրաշս բժշկականս ի նոյնոյ սրբոյն արարեցեալս, որովք բորբոքեաւ դէպ առ նա ջերմեանդութեամբ: Յետ յայտորիկ ծարաւեցեալ խնդրեաց զլուր, առ ժամայն բերեալ զմասնիկ սրբոյն՝ զօր ունէի, շօշափեցի նովա զլուրն բաժակին, և մատուցի ասելով. Նախ ասա զմի հայր մեր և ողջոյն, և ապա յանձն արա զքեզ հոգաբարձութեան սրբոյն, հայցելով զի լինիցի վերականգու քեզ ի նեղութեան քում և օգնական, զի թէ օգտակար իցէ քեզ ապրիլն ժա-

մանակ ինչ և հաճոյ կամացն Աստուծոյ՝ ընկալցի միջնորդութեամբ իւրով վասն քո՝ զշնորհն առողջութեան փութով. բայց թէ հաճոյ իցէ տեսնն՝ կոշեւ այժմ գրեզ առ ինքն, ընկալցի նոյնպէս միջնորդութեամբ իւրով՝ զշնորհն այն փութով. Զայս լուեալ՝ կալաւ զբաժակն ի ձեռին, արար զայն ամենայն՝ շերմեանդ սրտու և էարբ հաւատով. իբր էանց ժամ մի, սկսաւ քրտնիլ, որով եղև դիւրութիւն մեծ և հանդարտեցաւ փոքր ինչ ի վշտալի տառապանացն, և յուսով առողջութեան էկաց աւուրս Ե, և երեկոյնն այնորիկ եկն Սուգիաս Եպսոն. այց առնել զնա, և խոստովանեցուցեալ մխիթարեաց բանիւք ոգեւ. բականօք և զնաց. Արդ ի գիշերին այնմիկ կացի իս առ նմա ի ծառայել, և ի չորրորդ պահու գիշերոյն ասէ ցիս. Տուր ինձ զխաշն՝ յորում իցէ մասն սրբոյն. իբրև մատուցի կալաւ երկոքումք ձեռօքն, համբուրեաց երիցս, եղ ի վերայ աշացն և երեսացն ասելով. Սուրբդ Աստուծոյ հաս ինձ օգնութիւն ի նեղութեան իմում, և տուր ինձ հանգչիլ սակաւ մի քնով, զի ոչ կարեմ այլևս դիմանալ. Զայս ասացեալ ետ ինձ զխաշն և ընկողմանեւ ցաւ. ի մէջ գիշերին էկաց առ նմա տէր Օհանն ի ծառայել, և ես զնացի ի նիշեւ. Իննեւորդ ժամուս խնդրեալ զսակաւ մի ապուր և կերեալ է ձեռամբ տէր Օհանին. Մեւ տասանին՝ հայցեալ է զանօթ օրհնեալ ջրոյն, համբուրեալ մեծաւ շերմեանդութեամբ և մատամբ իւրով սրկեալ է զգէթ, զկոկորդն և զկուրծն, և տուեալ զանօթն՝ ընկողմաւ նեալ է ասելով. Յիսուս, Մարիա, և այլն, քանի մի անգամ. Յետ պահու միոյ աղաւ զակեալ է. Հասիւր տէր Օհան, զի մեռանիմ աւասիկ. Եւ նա դիմեալ առ նա ասելով. Զի՞նչ խնդրես. ասացեալ է թէ կալ զծածկոցն զի դառնայցեմ ընկողմանիւ առ միւս կողմն. զկնի դառնալոյն կացեալ սակաւ ինչ՝ աւանդեալ է զհոգին իւր ընդ լուսանալ շաբաթուն, խաղաղական մահուամբ ի ձեռն ստեղծողին իւրոյ. Եւ ընդ լուսանալ միաւ շաբաթին՝ բարձին զնա և տարան յեկեղեցի Հոգւոյն Սրբոյ, ուր զկնի պատարագացն՝ թաղեցին առաջի սեղանոյ երանեցեալ կուսին. ...

Գերարգելութեան քում Նուաստ ծառայ.

Գրեցաւ 1726

Ի Մարտի 9

(Շարունակելի)

Յօնան Եպս. Սեպաստիոյ

Հ. Ղ. ՏԱՅԵԱՆ

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

ԱԶԳԻՍ ՆԱՀԱՊԵՏ

Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՅՈՒՇԻԿԻ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀԱՅՈՅ

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԵԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԸ

(Բ Տպագրութիւն)

Ի Ս. ՂԱԶԱՐ - ՎԵՆԵՏԻԿ

Առաջին Հատորին Բ. տպագրութիւնը արդէն լոյս տեսած է տարւոյս սկիզբը. Երկու հա տորները միասին կ'արժեն ֆր. գաղղ. 25 ֆրանսէին՝ ֆր. գաղղ. 14:

